

# Բնապահպանական մշտադիտարկման կիսամյակային հաշվետվություն

Ծրագրի համարը՝ 42145  
հուլիս - դեկտեմբեր 2014թ.

**Հայաստան: Հյուսիս-Հարավ Ճանապարհային Միջանցքի  
Ներդրումային Ծրագիր  
Տրանշեր 1 և 2  
(Ֆինանսավորվում է ԱԶԲ-ի կողմից)**

Կազմվել է “Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի” (ՕԻԿ) պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) կողմից՝ հիմնվելով Ծրագրի կառավարման խորհրդատուի (ՕԿԽ) բնապահպանական մշտադիտարկման ամսական հաշվետվությունների վրա



«ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ԾԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄՅՈՒՆ  
ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ»  
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ  
ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ

“ORGANIZATION FOR IMPLEMENTATION OF NORTH-SOUTH ROAD CORRIDOR  
INVESTMENT PROGRAM” STATE NON-COMMERCIAL ORGANIZATION  
CHIEF EXECUTIVE OFFICER

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0002, Թումանյան 38  
Հեռ. (374 60) 50 68 70, 50 68 71  
38 Tumanyan Str., Yerevan 0002, Republic of Armenia  
Tel. (374 60) 50 68 70, 50 68 71

N 05/L-33  
«26» 08 2015

Ում՝ Պրն. Սենեվիրատնեին  
Ծրագրի ղեկավար  
Կենտրոնական և Արևմտյան Ասիայի  
վարչություն  
ԱԶԲ  
Ծրագրի համար՝ 42145  
Հայաստան՝ Հյուսիս-հարավ  
ճանապարհային միջանցքի ներդրումային  
ծրագիր, Տրանշեր 1 և 2  
Առարկա՝ Կիսամյակային  
բնապահպանական մոնիթորինգի  
հաշվետվություն, հուլիս-դեկտեմբեր  
2014թ.

To: Mr. Seneviratne  
Project Officer  
Central and West Asia Department  
ADB  
Project number: 42145  
Armenia: North-South Road Corridor  
Investment Program, Tranches 1 and 2  
Subject: Bi-annual Environmental  
Monitoring Report July-December 2014

Հարգելի պարոն Սենեվիրատնե,

Dear Mr. Seneviratne ,

Կից Ձեր դիտարկմանն ու հաստատմանն են  
ներկայացնում կիսամյակային  
բնապահպանական մոնիթորինգի  
հաշվետվություն, հուլիս-դեկտեմբեր 2014թ.:

For your review and approval please find  
attached Bi-annual Environmental Monitoring  
Report July-December 2014.

Հարգանքով՝

Best regards,

Ա.ՍԱՐԳՍՅԱՆ

A. SARGSYAN

Կատ. Մ. Բադեյան

Prep: by: M. Badeyan

Բովանդակություն	
Մաս I Ներածություն.....	6
1. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ և ԾՐԱԳՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՇՎԵՏՈՒԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ.....	7
2. Բնապահպանական անվտանգության համակարգի աշխատակազմ .....9	
2.1. ԾԻԿ արտաքին ազդեցության և վերաբնակեցման բաժին.....	10
2.2 ԾԿԽ բնապահպանական անվտանգության բաժին.....	10
2.3 Կապալառուի Բնապահպանության բաժին.....	11
Մաս II Բնապահպանական Կառավարում.....	12
3. Բնապահպանական Անվտանգության Համակարգի Ծրագիր.....	12
3.1 Համապատասխանություն Ազգային Անվտանգության Համակարգի հետ .....	12
3.2 Համապատասխանություն ԱԶԲ Անվտանգության Համակարգի հետ.....	12
3.3 Կապալառուի համապատասխանությունը ՇՄԿՊ-ի հետ .....	13
3.4 Քարհանքերի, հանված նյութի, բնահողի կուտակման համար վայրերի, ինչպես նաև բետոնի գործարանների և պատմամշակութային հուշարձանների տեղամասային բնապահպանական կառավարման ծրագրերի հաստատումներ .....	13
3.5 ԱԶԲ առաքելություն .....	14
3.6 Վերապատրաստում և Բնապահպանական անվտանգության հարցերի ներկայացում.....	16
3.7 Հնագիտական աշխատանքների ծրագիր.....	16
3.8 Բողոքների լուծման մեխանիզմ և խորհրդատվություն.....	17
3.9 Կապ .....	19
Մաս III Բնապահպանական մոնիթորինգ.....	21
4. Մոնիթորինգ.....	21
4.1 Հատվածոներ 1-ի , 2-ի, 3-ի ճանապարհի ՇՄԿՊ-ի հետ համապատասխանության մոնիթորինգ .....	21
4.2 Սարքավորումներով չափումներ և օդի որակի, աղմուկի և վիբրացիայի, ջրի որակի բնապահպանական պարամետրերի մոնիթորինգ.....	22
4.3 ԾԿՄՀ ցուցանիշներ.....	23
4.4 Անհամապատասխանության ծանուցումներ.....	23
5. Եզրակացություններ և առաջարկներ .....	24
6. 2015թ-ի հունվարից հունիս հաշվետու ժամանակահատվածի համար գործողությունների պլան:.....	26

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ Ա. Թափոնների և հանված նյութի կուտակման վայրերի կարգավիճակ Հատված 1-ում

ՀԱՎԵԼՎԱԾ Բ. Հնագիտական պեղումների կարգավիճակը ներկայացնող աղյուսակ

ՀԱՎԵԼՎԱԾ Գ. Ելակետային տվյալների հավաքագրման ժամանակացույց

ՀԱՎԵԼՎԱԾ Դ. Հատվածներ Աղմուկի, փոշու և վիբրացիայի գնահատման հաշվետվություններից

ՀԱՎԵԼՎԱԾ Ե. Հաշվետու ժամանակաշրջանում մոնիթորինգ այցերի ընթացքում հայտնաբերված անհամապատասխանություններ

## Հապավումների ցանկ

ԱԶԲ	Ասիական Զարգացման Բանկ
ԿՇՄԿՊ	Կապալառուի Շրջակա միջավայրի կառավարման պլան
ՇՄԿՊ	Շրջակա միջավայրի կառավարման պլան
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի ազդեցության գնահատում
ՆԲՓ	Նախնական բնապահպանական փորձաքննություն
ԲՄՄ	Բնապահպանության գծով միջազգային մասնագետ
ԲԱՄ	Բնապահպանության գծով ազգային մասնագետ
ԾԿԽ	Ծրագրի կառավարման խորհրդատու կազմակերպություն
ԾԻԿ	Ծրագրի իրականացման կազմակերպություն
ԲՆ	Բնապահպանության նախարարություն
ՏԿՆ	Տրանսպորտի և կապի նախարարություն
ՄՆ	Մշակույթի նախարարություն
ՇԿՊ	Շինհրապարակի կառավարման պլան
ԵԿՊ	Երթևեկության կառավարման պլան
ԲՄՀ	Բնապահպանական մոնիթորինգի հաշվետվություն

## Մաս I Ներածություն

Սույն Բնապահպանական մշտադիտարկման կիսամյակային հաշվետվությունը ընդգրկում է 2014թ-ի հուլիսից դեկտեմբեր ժամանակահատվածը:

Հաշվետվությունը պատրաստվել է ԾԿԽ-ի և Կապալառուի հաշվետվությունների հիման վրա: ԾԿԽ-ը S1-ի և S2-ի համար ֆրանսիական “Սաֆեժ” և իսպանական “Էպտիսա” ընկերությունների համատեղ ձեռնարկությունն է:

1. ՀՀ-ը ընտրել է Բավրա-Երևան-Ագարակ երթուղին որպես հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք, որը պետք է վերականգնվի, վերակառուցվի և լայնացվի և նշանակել է Տրանսպորտի և կապի նախարարության (ՏԿՆ) “Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի” ԾԻԿ ՊՈԱԿ-ին (ՀՀՃԾ ԾԻԿ ՊՈԱԿ) որպես աշխատանքների համակարգող: Ծրագիրը ֆինանսավորվում է Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) կողմից Բազմափուլ ֆինանսավորման գործիքի շրջանակներում (ԲՖԳ):

2. ԲՖԳ-ը նախատեսված է հյուսիսից հարավ ձգվող ազգային ճանապարհների վերականգնման և արդիականացման համար՝ նոր ընդլայնված Հյուսիս-Հարավ մայրուղու վերածման նպատակով: Հիմնական նպատակն է ընդլայնել առկա երկուղի ճանապարհները (հիմնականում ոչ բարվոք վիճակում)՝ վերածելով քառուղի ճանապարհների հնարավորության դեպքում գոյություն ունեցող ծրագծերի երկայնքով կամ կառուցելով նոր այլընտրանքային երկուղի ճանապարհներ այն հատվածներում, որտեղ մեկ քառուղի ճանապարհը հնարավոր չի լինի կառուցել:

3. Տրանշ 1-ի նպատակն է բարելավել Հյուսիս-հարավ միջանցքի երկու ճանապարհային հատվածներ, մասնավորապես՝ Երևանից Աշտարակ M-1 ճանապարհը կմ 18+370-ից մինչև կմ 29+773 (Հատված 3՝ Կապալառուի պայմանագրով) և Երևանից Արարատ M-2 ճանապարհի կմ 9+312-ից մինչև կմ 47+400 (Հատված 2՝ Կապալառուի պայմանագրով):

4. Տրանշ 2-ը սկսվում է Աշտարակում կմ 29+600 և ավարտվում՝ Թալինի մոտ կմ 71+500 (Հատված 1՝ Կապալառուի պայմանագրով): Ագարակում կառուցվելու են երկու շրջանցիկ ճանապարհներ՝ սկսած կմ 29+934-ից մինչև կմ 32+600 և Ուջանում կմ 36+600-ից մինչև կմ 40+300: Ծրագիրը նաև ունենալու է նոր ճանապարհային ծրագիծ (8.95 կմ) Կաթնաղբյուրում՝ սկսած կմ 59+950-ից մինչև կմ 68+900, որը գտնվելու է առկա մայրուղու ձախ կողմում և միանալու է առկա ծրագծին Թալինում:



Պատկեր 1. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Տրանշ 1 և Տրանշ 2

## 1. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ և ԾՐԱԳՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Շինարարության ընթացքում իրականացվել են հետևյալ շինարարական աշխատանքները.

### 1.1 Հատված 1 Աշտարակ-Թալին Մ1 ճանապարհ ՊԿ 29+600-ից մինչև ՊԿ 71+500

Շինարարական աշխատանքները իրականացվել են “Կորսան Կորվիամ Կոնստրուկսիոն” Էս. Ա. հայկական մասնաճյուղի և իր ենթակապալառուների կողմից՝ “Dental Import” ՍՊԸ, “Mirada” ՍՊԸ և “Nivecotrans” ՍՊԸ:

Կատարվել են հետևյալ շինարարական աշխատանքները՝ մաքրում և արմատահանում, ջրատար խողովակների և ստորգետնյա անցումների կառուցում, խողովակների ետլիքք,

լիցք, ժայռային հանույթ, հանույթ, քանդում, պայթեցում, արտաքին շերտի հեռացում և պահեստավորում, ինչպես նաև երթևեկության շեղումների համար լայնացման նախապատրաստում:

Անվտանգության միջոցառումներ: Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում շինարարական աշխատանքները ներառում են և ճանապարհային նշանների տեղադրում/տեղափոխում և բետոնե բլոկերի տեղադրում:

### **1.2 Հատված 2 Երևան-Արարատ Ս2 ճանապարհի ՊԿ9+312 մինչև ՊԿ 47+40**

Շինարարական աշխատանքները իրականացվել են “Կորսան Կորվիամ Կոնստրուկսիոն” Էս. Ա. հայկական մասնաձյուղի և իր ենթակապալառուների կողմից՝ “Dental Import” ՍՊԸ, “AAB” ՍՊԸ, “Betonika” ՍՊԸ, “A. Sargsyan” ՍՊԸ, “A. Torosyan” ՍՊԸ, “Jakshin” ՍՊԸ, “Ergus” ՍՊԸ, “Mirada” ՍՊԸ, և “Nivecotrans” ՍՊԸ:

Վերակառուցման աշխատանքները իրականացվել են Երևան-Արարատ Ս2 ճանապարհի ՊԿ 9+312-ից մինչև ՊԿ 28+900 հատվածում:

Կատարվել են հետևյալ շինարարական աշխատանքները. Հողային պաստառի, ենթահիմքի և հիմքի նախապատրաստական աշխատանքներ, հավաքովի ջրահեռացման համակարգի շինարարություն, միկրո ֆրեզում, կամուրջի հիմքի մուտք, բետոնե ծածկի վնասների նորոգում, լիցք և բետոնե ծածկի աշխատանքներ, ճանապարհի նախնական նշագծում, բետոն փոխի խոչընդոտների տեղափոխում, ասֆալտի փոստրակների նորոգում, ասֆալտի ֆրեզում, կողնակների կառուցում, կարերի կտրում, հերմետիկացում, իջատեղերի մուտքերի և ելքերի շինարարություն:

Անվտանգություն/ապահովության միջոցառումներ՝ այս ժամանակահատվածում շինարարական աշխատանքները ներառում են բետոնե բլոկերի և երթևեկության կարգավորման նշանների տեղադրում:

### **1.3 Հատված 3 Երևան - Աշտարակ Ս1 ճանապարհի ՊԿ 18+370 մինչև ՊԿ 29+773**

Ս1 Երևան-Աշտարակ հատվածի շինարարական աշխատանքները իրականացվել են “Կորսան Կորվիամ Կոնստրուկսիոն” Էս. Ա. հայկական մասնաձյուղի և իր ենթակապալառուների կողմից՝ “Dental Import” ՍՊԸ, “AAB” ՍՊԸ, “Betonika” ՍՊԸ, “Mirada” ՍՊԸ, և “Nivecotrans” ՍՊԸ:

Հետևյալ աշխատանքները իրականացվել են Ս1 Երևան-Աշտարակ հատվածի վրա (ՊԿ 18+370-ՊԿ 29+773). Առկա ասֆալտի հեռացում, հանույթ, լիցք, կողնակների կառուցում, ճանապարհի բաժանանար գոտու շինարարություն, հիմքի և ենթահիմքի նախապատրաստում, միաձույլ կողային առուների տեղադրում և բետոնե ծածկի



աշխատանքներ, բետոնե դիտահորերի կառուցում, հավաքովի կողային առունների կառուցում, կարերի կտրում, հերմետիկացում և բետոնե ծածկի աշխատանքներ:

Անվտանգություն/ապահովության միջոցառումներ՝ այս ժամանակահատվածում շինարարական աշխատանքները ներառում են բետոնե բլոկերի և երթևեկության կարգավորման նշանների տեղադրում:


Շինարարական աշխատանքները ժամանակավորապես դադարեցվել են բոլոր հատվածներում 2014թ-ի դեկտեմբերի 20-ին՝ անբարենպաստ եղանակային պայմանների պատճառով:

## 2. Բնապահպանական անվտանգության համակարգի աշխատակազմ

Ծրագրի իրականացման կազմակերպությունը կատարում է ծրագրի իրականացման կառավարում օրական կտրվածքով: ԾԻԿ-ը ներառում է իրավական և արտաքին ազդեցության բաժին, որի պատասխանատվությունների թվում են ծրագրի բոլոր բնապահպանական հարցերի կառավարումը:

Ծրագրի կառավարման խորհրդատուն ԾԻԿ-ին Տեխնիկական աջակցություն է տրամադրում՝ ծրագրի կառավարման և հաշվետվողականության հարցերում: ԾԿԽ-ի Շրջակա միջավայրի անվտանգության բաժինը պատասխանատու է շինարարական աշխատանքների վերահսկողության՝ բնապահպանական և հնագիտական ազդեցության տեսանկյունից, և մասնավորապես, Կապալառուի կողմից ՇՄԿՊ-ի իրականացման վերահսկման և հաշվետվողականության համար:

Կապալառուն իրականացնում է շինարարական աշխատանքները: Կապալառուի բնապահպանության բաժինը պատասխանատու է ՇՄԿՊ-ի, ԿՇՄԿՊ-ի, ՇԿՊ-ի իրականացման, շինարարական աշխատանքների մոնիթորինգի և հաշվետվողականության համար:



## 2.1. ԾԻԿ արտաքին ազդեցության և վերաբնակեցման բաժին

Արտաքին ազդեցության և վերաբնակեցման աշխատանքները ստանձնել են արտաքին ազդեցության և վերաբնակեցման համակարգողը; Սոց. անվտանգության մասնագետը և Բնապահպանության մասնագետը:

Գևորգ Աֆյանը- Արտաքին ազդեցության և վերաբնակեցման համակարգողը պատասխանատու է Ծրագրի բնապահպանական, տարաբնակեցման և սոցիալական կառավարման հարցերի համար: Նա փոխարինել է նախկին Արտաքին ազդեցության և վերաբնակեցման համակարգող Արմինե Եղիզարյանին 2014թ-ի նոյեմբերին:

Սոնա Պողոսյան - Սոց. անվտանգության մասնագետը պատասխանատու է Ծրագրի համապատասխանության համար ԱԶԲ Անվտանգության քաղաքականությանը և ՀՀ օրենսդրությանը:

Մարիամ Բաղեյան - Բնապահպանության մասնագետը պատասխանատու է Ծրագրի համապատասխանության համար ԱԶԲ Բնապահպանական քաղաքականությանը և ՀՀ օրենսդրությանը:

## 2.2 ԾԿԽ բնապահպանական անվտանգության բաժին

Ներկայումս ԾԿԽ Բնապահպանական անվտանգության բաժնի կազմում ընդգրկված են՝

Էդիտա Վարդգեսյանը՝ Բնապահպանության գծով ազգային մասնագետ (ԲԱՄ), ստանձնեց բաժնի ողջ կառավարման պատասխանատվությունը: Նա կես դրույքով է աշխատում: ԲԱՄ-ը ներգրավված չէր հուլիս-օգոստոս և դեկտեմբեր ամիսների ընթացքում, քանի որ նրա աշխատաժամանակը սպառվել էր ըստ Ծառայությունների համաձայնագրի ՓԿ2-ի, և բնապահպանության անվտանգության ծրագիրը իրականացվեց Ինժեների տեղամասային հսկիչների կողմից:

Ծառայությունների համաձայնագրի ՓԿ3-ով նախատեսվում է հետևյալ ներգրավվածություն ( որը դեռևս չի վերջնականացվել )՝

- 1) ԲԱՄ. 10 օր մարտին, 10 օր մայիսին, 8 օր օգոստոսին և 8 օր հոկտեմբերին, և ԲՄՄ
- 2) ԲՄՄ. մայիսին (ամբողջ ամիս).

Բորիս Գասպարյանը՝ Հնագիտության գծով ազգային մասնագետը (ՀԱՄ), պատասխանատու է Տրանշ 2-ում առկա հնագիտական հարցերի վերաբերյալ խորհրդատվության և հնագիտական պեղումների իրականացման, շինարարական աշխատանքների և Հայաստանի հնագիտությանը վերաբերող օրենսդրության միջև փոխհամապատասխանության, քարհանք կատարված ստուգայցերի, թափոնների կուտակման և բետոնի գործարանի տարածքների համար՝ հնագիտական գնահատման նպատակներից ելնելով: Դեկտեմբերին ԲԱՄ-ը

ներառված չէր, քանի որ նրա աշխատաժամանակը սպառվել էր ըստ Ծառայությունների համաձայնագրի ՓԿ2-ի:

Չարլզ Ադամսոնը՝ Բնապահպանության գծով միջազգային մասնագետը պատասխանատու է բնապահպանական անվտանգության հարցերում խորհրդատվության համար՝ հիմնվելով միջազգային փորձի վրա: Հաշվետու ժամանակաշրջանում նա ներգրավվածություն չուներ:

### **2.3 Կապալառուի Բնապահպանության բաժին**

Կապալառուի Բնապահպանության բաժինը կազմված է 4 անդամներից՝

Խավիեր Գոմես Մորենո Որակի և Բնապահպանության գծով ղեկավարը պատասխանատու է Բնապահպանական բաժնի ընդհանուր կառավարման համար:

Վիկտոր Բախտամյանը՝ Բնապահպանության գծով մասնագետը պատասխանատու է շրջակա միջավայրի կառավարման պլանի իրականացման համար:

Սոս Ամիրխանյան՝ Սոց. Կապերի գծով մասնագետ, պատասխանատու է Կապալառուի գործողությունների և ԱԶԲ Անվտանգության Քաղաքականության սոցիալական գծով մասի միջև փոխհամաձայնության համար:

Պատրիսիա Օրտեգա Գոնսալես՝ Առողջապահության և Անվտանգության գծով ղեկավարը պատասխանատու է Կապալառուի գործողությունների և ԱԶԲ Անվտանգության քաղաքականության առողջապահության և անվտանգության գծով մասի միջև փոխհամաձայնության համար:

## Մաս II Բնապահպանական Կառավարում

### 3. Բնապահպանական Անվտանգության Համակարգի Ծրագիր

#### 3.1 Համապատասխանություն Ազգային Անվտանգության Համակարգի հետ

3.1.1 Հաշվետու ժամանակաշրջանում շինարարությունը համապատասխանում է բոլոր ազգային բնապահպանական օրենքներին և կանոնակարգերին:

3.1.2 Մ1 Աշտարակ-Թալին ճանապարհի Հատված 1-ի բնահողի պահեստավորման գործադրությունները իրականացվել են ՀՀ գործող օրենսդրության համաձայն, մասնավորապես ՀՀ Հողային օրենսգրքի (2001թ.), ՀՀ Կառավարության թիվ 1396-Ն որոշման և ՀՀ թիվ 1026-Ն որոշման համաձայն:

3.1.3 Կապալառուն գրանցվել է ԲՆ-ում որպես ակտիվ բնապահպանական գործողությունների իրականացնող տնտեսվարող սուբյեկտ, որը պարբերաբար ներկայացնում է բնապահպանական հաշվետվություններ՝ ՀՀ օրենսդրության համաձայն: 2014թ-ի եռամսյակային 4 հաշվետվությունները Կապալառուն ներկայացրել է ԲՆ-ին հաշվետու ժամանակահատվածում:

3.1.4 Կապալառուն անհրաժեշտ կապ է ապահովում տեղական (համայնքներ) և տարածքային կառավարման մարմինների (մարզեր) հետ՝ շինարարության ընթացքում համապատասխանելու համար ՀՀ օրենսդրությանը և թույլտվություններ ու հաստատումներ է ձեռք բերում ցանկացած տարածքի օգտագործման և ճանապարհներով տեղափոխման համար, ինչպես նաև թափոնների կուտակման կամ գործարանների տեղադրման համար:

#### 3.2 Համապատասխանություն ԱԶԲ Անվտանգության Համակարգի հետ

3.2.1 Բնապահպանական իրականացումն ապահովելու համար անհրաժեշտ էր, որ շինարարության իրականացումը համապատասխանի ՇՄԿՊ-ի պահանջներին, որը մշակվել էր ԱԶԲ Բնապահպանական քաղաքականության համապատասխան:

3.2.2 Մինչ որևէ հատված շինարարական թափոնների կամ հանված նյութի համար որպես կուտակման վայր օգտագործելը Մ1 Աշտարակ-Թալին ճանապարհի Հատված 1-ում Կապալառուի կողմից մշակվում է Շինհրապարակի կառավարման պլան, որտեղ նշված են տարածքին բնորոշ բնապահպանական ազդեցությունները, ռիսկերի գնահատումը և մեղմացնող միջոցառումները: Նշված պլանը մշակելիս Կապալառուն ուղղորդվում է ԱԶԲ Կենտրոնական և Արևմտյան Ասիայի վարչության անվտանգության բաժնի կողմից մշակված Բնապահպանական անվտանգության տեղեկատուով: Ընդունվել են հետևյալ ընթացակարգերը՝ (i) Կապալառուն ընտրում է վերին շերտի պահեստավորման և հանված նյութի կուտակման համար վայր; (ii) ԾԿԽ ԲԱՄ-ը և ՀՓ-ը այցելում են այդ տարածք և Կապալառուին են տրամադրում տարածքի գնահատման հաշվետվություն՝ հայտնաբարված խոցելի վայրերի և տարածքի օգտագործման առաջարկներով (հաշվետու

Ժամանակահատվածում 6 գնահատման հաշվետվություններ են տրվել); (iii) Կապալառուն անվտանգ է դարձնում տարածքը և մշակում է ՇԿՊ՝ հիմք ընդունելով գնահատման հաշվետվության տվյալները, և ներկայացնում է ԾԿԽ հաստատմանը; (iv) ԾԿԽ ԲԱՄ-ը վերանայում է ՇԿՊ և հաստատում է; (v) Ապա Կապալառուին թույլ է տրվում սկսել տարածքի օգտագործումը:

3.2.3 Հետևելով ԱԶԲ պահանջին՝ տեղական ՀԿ-ների հետ հանդիպում կազմակերպվեց ԱԶԲ գրասենյակում հուլիս ամսին՝ նպատակ ունենալով ներկայացնել Հատված 1-ում հնագիտական բաղադրիչը և հնագիտական աշխատանքների ծրագրի իրականացման ընթացքը, ինչպես նաև Արուճի Քարավանատուն հնագիտական հուշարձանի և կառուցվող ճանապարհի հարևանությամբ գտնվող շինարարությունից այլ անմիջական ազդեցության ենթարկված տարածքների համար նախատեսված մեղմացնող միջոցառումները:

3.2.4 Աշտարակ-Թալին ճանապարհի հատվածներում Ծրագրի կողմից ազդեցություն կրող համայնքներում մի շարք հանրային լուսմներ են կազմակերպվել՝ բավարարելու համար ԱԶԲ անվտանգության քաղաքականության պահանջները (2009թ.), որոնք վերաբերում են տեղեկատվության ներկայացմանը և հանրության մասնակցությանը: Մանրամասները ներկայացված են ստորև 3.7 կետում՝ Խորհրդատվություն և բողոքների լուծման մեխանիզմ:

### **3.3 Կապալառուի համապատասխանությունը ՇՄԿՊ-ի հետ**

3.3.1 Բնապահպանական հարցերի իրականացումն ապահովելու համար Շինարարն ուղղորդվում է ՆԲՓ-ով և ՇՄԿՊ-ով Տրանշ 1-ի համար և ՇՄԱԳ-ով Տրանշ 2-ի համար, որպես Մրցույթի և Պայմանագրի փաստաթղթերի բաղկացուցիչ մաս, ինչպես նաև Կապալառուի Բնապահպանական կառավարման 3 պլաններով, որոնք մշակվել են վերջինիս կողմից ճանապարհի 3 հատվածների համար և մանրամասնում են շինհրապարակի բնապահպանական կառավարման պահանջների իրականացմանը և կառավարմանը, մասնավորապես՝ շինարարության ազդեցության մեղմացում, մոնիթորինգ և հաշվետվողականության պահանջներ: ՇՄԿՊ-ի հետ համապատասխանությունը պարբերաբար ստուգվում և ներկայացվում է (տես Մաս II Բնապահպանական Կառավարում):

### **3.4 Քարհանքերի, հանված նյութի, բնահողի կուտակման համար վայրերի, ինչպես նաև բետոնի գործարանների և պատմամշակութային հուշարձանների տեղամասային բնապահպանական կառավարման ծրագրերի հաստատումներ**

3.4.1 Մի շարք այցեր են կատարվել դեպի ճանապարհի Հատված 1՝ բնահողի և հանված նյութի կուտակման նպատակով Կապալառուի կողմից ընտրված վայրերը բնապահպանական ու հնագիտական տեսնակյունից գնահատելու համար: Այցեր են կատարվել Կապալառուի կողմից առաջարկված հետևյալ վայրեր՝ Թալին 2 - հանված նյութի կուտակման վայրեր (ՀՆԿՎ) և Կոշ 3- բնահողի Ժամանակավոր կուտակման վայր: Այցի ընթացքում արձանագրվել են մի քանի հնագիտական վայրեր, որոնք մոտ են Թալին 2 վայրին, և Կապալառուից պահանջվեց պատշաճ անդրադառնալ այդ հարցին ՇԿՊ-ում:

3.4.2 Հատված 1-ի հետևյալ վայրերի համար ՇԿՊ-ները հաստատվել են հաշվետու ժամանակահատվածում՝ Կաթնաղբյուր -5 ՀՆԿՎ (հաստատվել է 2014թ. սեպտեմբերի 8-ին), Կաթնաղբյուր – 4 ՀՆԿՎ (հաստատվել է 2014թ. սեպտեմբերի 22-ին), Թալին – 1 ԲԺԿ (հաստատվել է 2014թ. հոկտեմբերի 20-ին), Արուճ-1 ՀՆԿՎ և Արուճ 2 ՀՆԿՎ (հաստատվել է 2014թ. հոկտեմբերի 20-ին), և Արուճի Քարավանատան համար ՇԿՊ-ի վերջնական տարբերակը (հաստատվել է 2014թ. սեպտեմբերի 26-ին):

Հատված 1-ում հանված նյութի և բնահողի կուտակման համար վայրերի ՇՇՄԿՊ-ների մշակման և վերանայման մասին մանրամասն տեղեկատվությունը տրամադրվում է ամսական առաջընթացի հաշվետվություններում: Հատված 1-ում հանված նյութի և բնահողի կուտակման համար վայրերի կարգավիճակը և դրանց օգտագործման համար ՇՇՄԿՊ-ները ներկայացված են Հավելված Ա-ում:

### 3.5 ԱԶԲ առաքելություն

3.5.1 Երկրի անվտանգության տարեկան առաքելության շրջանակներում 2014թ-ի նոյեմբերի 12-ից 13-ը ԱԶԲ իրականացրել է բնապահպանական անվտանգության ստուգում, իսկ առաքելության ամփոփիչ հանդիպումը կայացավ 2014թ-ի նոյեմբերի 20-ին: Այցելություններ կատարվեցին դեպի հետևյալ վայրեր՝ 2 բետոնի գործարան, երկուսն էլ արտադրության վերջում, Ջրահովիտի քարհանք (փակված և տեղի համայնքին հանձնված), Մասիսի և Աշտարակ 2 թափոնների հեռացման վայրեր Ս1-ում և Կաթնաղբյուր 3 S2-ում (բոլորը գործում են), Կանթնաղբյուր 2 հողի կուտակման վայր S2-ում, երեք հնագիտական պեղումների վայրեր S2-ի և S3-ի Թալինից Լանջիկ ճանապարհային հատվածների երկայնքով:

3.5.2 Առաքելության կողմից ստացված արդյունքներ

- Նախկին աուդիտում կատարված բոլոր դիտողությունները իրականացվել են կամ ընթացքի մեջ են, բացառությամբ այն հանգամանքի, որ Շահվերդի արհեստական գերխոնավ տարածքի համար ՇՇՄԿՊ-ի մշակման նախքան շինաշխատանքների մեկնարկը: Առաքելությունը պահանջեց տեղադրել տեղեկատվական ցուցանակներ և անվտանգության նախազգուշական նշաններ ճանապարհի հատվածների, թափոնների և բնահողի կուտակման վայրերի երկայնքով:
- S1-ի 6 քարհանքերի և թափոնների հեռացման վայրերի, S2-ի 19 թափոնների հեռացման վայրերի և բնահողի կուտակման վայրերի համար ՇՇՄԿՊ-ներ են մշակվել, որոնք հաստատվել են ԾԿԽ-ի կողմից՝ ԾԻԿ-ի անունից: 7 թափոնների հեռացման վայրեր և բնահողի կուտակման վայրեր ընթացքի մեջ են: ՇՇՄԿՊ է հաստատվել Արուճի Քարավանատուն պատմամշակութային համալիրի համար: Առաքելությունը հիշեցրեց, որ (i) ԾԻԿ-ը ԱԶԲ-ին տեղեկացնի ՇՇՄԿՊ –երի հաստատման մասին, և (ii) շինհրապարակի փակումից հետո ԾԻԿ-ը հանձնման ակտը պահի ծրագրի փաստաթղթերի շարքում:

- ԾԿԽ-ի Բնապահպանության ազգային մասնագետի և հնագետի պայմանագրերը ավարտվել են 2014թ-ի հոկտեմբերին: ԾԿԽ-ը և ԱԶԲ-ը պետք է հաստատեն ՓԿ-ը՝ նրանց համար լրացուցիչ ժամանակ տրամադրելու համար: ԾԻԿ-ը պետք է ապահովի, որ ԾԿԽ բնապահպանության գծով միջազգային խորհրդատուն վերապատրաստում կազմակերպի ԾԻԿ, ԾԿԽ և Կապալառուի անձնակազմի համար իր յուրաքանչյուր այցի ընթացքում:
- Կարևոր է ԾԻԿ-ի կարողությունները բարձրացնել բնապահպանական կառավարման ոլորտում, քանի որ բնապահպանների անձնակազմը նոր է, իսկ S3-ում չի լինելու ԾԿԽ ծառայություններ:
- S1 վերգետնյա անցում՝ Հանրային լսումների արդյունքում 2 վերգետնյա անցումներ են առաջարկվել Մարմարաշեն և Բուրաստան համայնքների փոխհատումներում: Նախագծող խորհրդատուն պետք է ՏՇՄԿՊ մշակի ԾԻԿ-ի և ԱԶԲ-ի հաստատման համար նախքան շինարարության մեկնարկը: Հիմնական շեշտը պետք է դրվի Մարմարաշեն համայնքում ճանապարհի երկայնքով տեղակայված տների վրա և Բուրաստան համայնքում ջրահեռացման համակարգի վրա:
- Հնագիտական աշխատանքներ՝ ԾԻԿ-ի կողմից հաստատվել է Արուճի քարավանատան մոտ մուտքի ճանապարհի նոր ծրագիծը, և այժմ ընթացքի մեջ է նոր նախագիծը:
  - #2 Ագարակ հնագիտական վայրի պեղումների արդյունքում հայտնաբերվել է խոշոր բնակավայր, որը մեծ ներուժ կունենա զբոսաշրջիկության զարգացման և պատմամշակութային պահպանման համար: Առաքելությունը պահանջեց լիովին համապատասխանել Ֆիզիկական և մշակութային ռեսուրսների 2009թ-ի ԱՔՀ-ին և առաջարկեց ԾԿԽ հնագետին քննարկել հնարավոր նոր ծրագծի տարբերակը ԾԻԿ-ի և Մշակույթի նախարարության հետ: Պայթեցման աշխատանքեր չեն թույլատրվելու այդ տարածքում:
  - #3 Աղձքի պեղումները հնարավոր է չավարտվեն մինչև 2014թ-ի վերջը՝ Կապալառուի կողմից ուշ վճարման պատճառով:
  - #4 Ներքին Սասնաշեն՝ պեղումներ կիրականացվեն 2015թ-ի ընթացքում, երբ Մշակույթի նախարարությունը այն ճանաչի հնագիտական վայր:
- Տրանշ 3՝ Քանի որ ամբողջ Տրանշ 3-ի համար (46.5 կմ) ՇՄԱԳ-ը հաստատվել է, իսկ ԵՆԲ-ը համաձայնվել է ընդունել ԱԶԲ-ի 2009թ-ի ԱՔՀ-ը ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորվող հատվածի համար: ՇՄԱԳ-ը բաժանելու կարիք չի լինի: Այնուամենայնիվ Առաքելությունը պահանջեց, որ մրցութային փաստաթղթերում հստակ նշվի, որ ՇՄԿՊ-ը կիրառվի միայն ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող հատվածի համար (18.7 կմ): Այս հատվածքում խոշոր բնապահպանական մտահոգություններ կայացնող հարցերից են օդի աղտոտվածության (փոշի) ազդեցությունը Մաստարա և Լանջիկ քաղաքների վրա և մշակաբույսերի վրա: Ընդհանուր առմամբ ծրագիրը գնահատվել է որպես համապատասխան: Հաջորդ հաշվետու ժամանակահատվածքում ԾԻԿ-ը կլուծի արդյունքներում ներկայացված բոլոր խնդիրները:

### **3.6 Վերապատրաստում և Բնապահպանական անվտանգության հարցերի ներկայացում**

3.6.1 ԾԿԽ ԲԱՄ-ի կողմից ԾԿԽ նոր աշխատակիցների համար պարբերաբար կազմակերպվել են իրազեկման քննարկումներ ԱԶԲ բնապահպանական անվտանգության պահանջների վերաբերյալ:

3.6.2 Հուլիսի 10-ին Աշտարակի գրասենյակում Կապալառուի բնապահպանական թիմը կազմակերպել էր ԱԶԲ բնապահպանական անվտանգության պահանջների մասին հատուկ վերապատրաստման դասընթաց, մասնավորապես՝ երթևեկության կառավարման պլանների և ճանապարհային անվտանգության հարցերի վերաբերյալ: Ինժեները ապահովեց անձնակազմի վարորդների մասնակցությունը:

3.6.3 2014թ-ի հոկտեմբերի 17-ին Կապալառուի ինժեներական և բանվորական անձնակազմի համար (ներառյալ ենթակապալառուներ) վերապատրաստման դասընթաց կազմակերպվեց՝ Ներքին Բազմաբերդից մինչև Կոշ հատվածում հնագիտական վայրերի մոտ գտնվող շինարարական աշխատանքների ազդեցությունների մեղմացնող միջոցառումների վերաբերյալ, ինչպես նաև հնագիտական գտածոների ընթացակարգերի վերաբերյալ:

3.6.4 2014թ-ի դեկտեմբերի 9-ին “Կորսան Կորվիամ Կոնստրուկսիոն” ընկերության Հայաստանյան մասնաճյուղը բնապահպանական վերապատրաստում կազմակերպեց “Կամուրջին” ՄՊԸ-ի 12 աշխատակիցների հետ:

### **3.7 Հնագիտական աշխատանքների ծրագիր**

3.7.1 Ագարակի, Աղձքի և Ներքին Նավեր հնագիտական վայրերում կատարվել են պեղումներ և դաշտային աշխատանքներ:

3.7.2 Վերին Սասնաշեն, ներքին Սասնաշեն, Ներքին Բազմաբերդ և Կաքավաձոր համայնքներում 2013թ-ին իրականացված պեղումների մասին վերջնական հաշվետվությունները ներկայացվել են ՀՀ Պետական հնագիտական հանձնաժողովին և ընդունվել են վերջինիս կողմից 2014թ-ի հուլիս 12-ին:

3.7.3 Ներքին Սասնաշեն համայնքում լրացուցիչ պեղումներ իրականացնելու վերաբերյալ խնդրանքը, որը ներկայացվել էր “Պատմամշակութային ժառանգության գետահետազոտական կենտրոն” ՊՈԱԿ-ի կողմից և հաստատվել ՄՆ-յան կողմից, ընթացքի մեջ է: Խնդրանքը հիմնավորվում է պեղումների արդյունքում հայտնաբերված վտանգված հնագիտական հուշարձանը, որը պահպանման կարիք ունի: Հնագիտական աշխատանքային պլան կմշակվի այն ժամանակ, երբ ՄՆ-ը տրամադրի հուշարձանի սահմանները:

3.7.4 Մի շարք հնագիտական գնահատման այցեր են կազմակերպվել Կապալառուի կողմից ընտրված վայրերում Թալին, Եղնիկ, Վերին Սասնաշեն, Կաթնաղբյուր և Կոշ համայնքներում՝ բնահողի կուտակման և հանված նյութի պահեստավորման համար:

3.7.5 Մոնիթորինգ ստուգման այցեր են կազմակերպվել դեպի Ագարակի, Ներքին Նավերի և Աղձքի հնագիտական վայրեր՝ ստուգելու համար աշխատանքների



համապատասխանությունը կառուցվող ճանապարհին անմիջական հարող հնագիտական վայրերի համար մշակված մեղմացնող միջոցառումներին:


3.7.6 Նոր նախագծի Արուճ-Ագարակ փոխհատման համար տաարծքի ուսումնասիրությունը տեղի ունեցավ 2014թ-ի նոյեմբերի 21-ին: Այն ցույց տվեց, որ պլանավորված հնագիտական պեղումների ծավալը կնվազի համաձայն նոր նախագծի:

3.7.7 Պեղումներ իրականացնող կազմակերպությունների և հաշվետու ժամանակահատվածի ընթացքում իրականացված պեղումների կարգավիճակի մասին ամփոփ հաշվետվությունը ներկայացված են Հավելված Բ-ում:

### **3.8 Բողոքների լուծման մեխանիզմ և խորհրդատվություն**

3.8.1 Հիմնվել է Բողոքների լուծման մեխանիզմ՝ անդրադառնալաու համար նորմայից բարձր քանակով փոշու, աղմուկի, թափոնների ոչ ճիշտ կուտակման և բնապահպանական այլ հարցերին, որը ներկայացված է Տրանշ 2-ի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մեջ: Բողոքների լուծման մեխանիզմը լրացնում է առկա նամակների կամ անձնական դիմումների միջոցով դիմելու մեխանիզմներին, որը հիմնվել է տեղական իշխանությունների կողից:

Բողոքների ընթացակարգը և դրանց լուծման մեխանիզմի փուլերը ներկայացված են պատկեր 2-ում:



Պատկեր 2. Բողոքների ընթացակարգ և դրանց լուծման մեխանիզմ

Կապալառուն տրամադրել է բողոքների գրանցամատյան յուրաքանչյուր ազդառու համայնքին, որը պահվում է համայնքապետի գրասենյակում և հասանելի է համայնքի անդամների համար: Նաև յուրաքանչյուր համայնքում փակցված են պաստառներ, որոնք պարունակում են կոնտակտային տվյալներ, որոնցով կարելի է դիմել խախտումների դեպքում: Կապալառուի՝ սոցիալական կապերի մասնագետ Մոս Ամիրխանյանը պատասխանատու է ծրագրի գործունեությանը վերաբերող մտահոգություններին անդրադառնալու համար: Վերջինիս հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն և անունը նշված են պաստառների վրա: Ներկա դրությամբ որևէ բողոքներ և/կամ առաջարկներ բնապահպանական հարցերի վերաբերյալ չեն գրանցվել:

3.8.2 Հաշվետու ժամանակահատվածքում Կապալառուն տրամադրեց Բողոքների գրանցամատյանը Արուճի և Շամիարամի համայնքներին: Ինչպես նաև փակցվեցին հատուկ պաստառներ կոնտակտային տվյալներով:

3.8.3 Հատված 1-ի հանրության մասնակցության և տեղեկատվության տրամադրման ծրագրի շրջանակներում 2014թ-ի սեպտեմբերի 23-ին հանրային լսումներ կազմակերպվեցին Կոշ համայնքում: Լսումների նպատակն էր ազդառու համայնքներին իրազեկել շինարարության ընթացքում հնարավոր բնապահպանական ազդեցությունների վերաբերյալ: Ծրագրի հնարավոր բնապահպանական ազդեցությունները և նախատեսվող կանխարգելող միջոցառումները ներկայացվել են Կապալառուի բնապահպանի կողմից: Շեշտվեց, որ ազդեցությունը ժամանակավոր է լինելու, իսկ բոլոր արտանետումները լինելուն են թույլատրված սահմաններում: Կապալառուն դիմեց բնահողի և հանված նյութի և այլ շինարարական թափոնների հեռացման համար տարածքների տեղափոխման նպատակով: Ներկայացվեց նաև բողոքների լուծման մեխանիզմը:

Կոշ համայնքում բնապահպանական հարցերին վերաբերող որևէ մտահոգություններ չբարձրացվեցին հանրային լսումների մասնակիցների կողմից:

### 3.9 Կապ

3.9.1 Հաշվետու ժամանակահատվածքում ԾԿԽ ԲԱՄ և ՀԱՓ-ի հետ կազմակերպվել են կանոնավոր հանդիպումներ և քննարկումներ, որտեղ քննարկվել են տարատեսակ բնապահպանական ու հնագիտական հարցեր: Մասնավորապես՝ հատված 1-ում շինարարությանը խոչընդոտող ծառերի հարցը, որի վերաբերյալ ԾԿԿ-ը առաջարկեց Կապալառուին կազմակերպել ծառերի հատում ըստ Պայմանագրի 401.01 կետի; Ներքին Նավեր, Աղձք և Ագարակ հնագիտական վայրերում պեղումներ իրականացնող կազմակերպությունների հետ պայմանագրեր և գնումների ընթացակարգեր; Արուճի Քարավանատան հնագիտական հուշարձանի համար ՇԿՊ; Ներքին Մասնաշենում նոր հայտնաբերված հնագիտական պեղումներ, և այլ ընթացիկ հարցեր:

3.9.2 Կապալառուի բնապահպանական թիմի հետ կապը իրականացվել է կանոնավոր շաբաթական հանդիպումների, պաշտոնական նամակների, էլ. նամակների, հեռախոսազանգերի և անձնական հանդիպումների միջոցով: Քննարկվել են բազմաթիվ հարցեր: Մասնավորապես՝ հաշվետու ժամանակահատվածում քննարկվել են հետևյալ հարցերը.

- Պայթեցման աշխատանքներ՝ Կապալառուին հիշեցրին, որ պայթեցման աշխատանքները պատշաճ չէին կազմակերպվում (Մեթոդաբանությունը չի ներկայացվել, բնապահպանական ազդեցությունները չեն պարզվել և պաշտպանիչ միջոցառումներ չեն նախատեսվել): Կապալառուից պահանջվեց համապատասխան միջոցառումներ ձեռնարկել հաջորդ պայթեցման համար:

- պայթեցման աշխատանքների բնապահպանական ազդեցությունները՝ Կապալառուից պահանջվեց մաքրել Ներքին Բազմաբերդի մասնավոր հողակտորները քարերից, որոնք Հատված 1-ում հուլիսին կատարված պայթեցման աշխատանքների արդյունք են:

Կապալառուն իր թիվ 2292 առ 22 սեպտեմբեր 2014թ նամակում զեկուցել է, որ պայթեցման աշխատանքների հետևանքով թափված բոլոր քարերը հեռացվել և մաքրվել են, համայնքի ղեկավար պրն. Խ. Նորեյանը գոհուակության նամակ տրամադրեց:

- ստորգետնյա անցումի մասնակի քանդման համար մեթոդաբանություն՝ Կապալառուն ներկայացրել է փաստաթուղթը ԿՄ 57+780-ի համար ներկայացրել է առանց բնապահպանական դիտարկումների:

- Կոշ 1 և Կոշ 2 աղբավայրերի համար մերժված ՏՇՄԿՊ-ների վերաբերյալ դիտողություններ.

- նոր անձնակազմի համար անվտանգության և բնապահպանության թեմայով լրացուցիչ վերապատրաստման կազմակերպում

- բոլոր երեք հատվածներում պարտադիր գործողություններ նախքան ձմռանը շինաշխատանքների դադարեցումը:

- 2014թ-ի հոկտեմբերի վերջին իրականացված Հատված 1-ում աղմուկի մակարդակի մոնիթորինգի արդյունքներ: Կապալառուին ծանուցվեց, որ աղմուկի առավելագույն մակարդակը գերազանցում է սահմանաչափը և պահանջվեց համապատասխան միջոցառումներ ձեռնարկել: Պատասխան նամակում Կապալառուն բացատրեց գերազանցման պատճառները և մատնանշեց, որ աղմուկի միջին մակարդակը պահպանվում է ՀՀ օրենքով սահմանված նորմերում:

- ԾԿԽ ԲԱՄ-ի կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքներ:

- այլ ընթացիկ հարցեր:

## Մաս III Բնապահպանական մոնիթորինգ

### 4. Մոնիթորինգ

Հաշվետու ժամանակահատվածում մոնիթորինգ է իրականացվել ըստ մոնիթորինգի ծրագրի, որը մշակվել է հիմք ընդունելով ԱԶԲ անվտանգության քաղաքականությունը և ՇՄԿՊ պահանջները: Մոնիթորինգի ծրագիրը ներառում է:

- (1) Կանոնավոր մոնիթորինգ այցեր ամսական կտրվածքով ստուգելու համար Հատվածներ 2-ի և 3-ի ճանապարհի շինարարական աշխատանքների համապատասխանությունը ՇՄԿՊ պահանջներին, ինչպես նաև Հատված 1-ի ճանապարհի բնահողի և հանված նյութի կուտակման մոնիթորինգ;
- (2) Չծրագրված ստուգող այցեր անհրաժեշտության դեպքում;
- (3) Հատված 1-ի ճանապարհի աղմուկի և վիբրացիայի, ջրի, օդի որակի բնապահպանական մոնիթորինգ և չափումներ;
- (4) Մոնիթորինգի ստուգաթերթիկի լրացում և համապատասխանությունների և անհամապատասխանությունների ամփոփում;
- (5) Անհամապատասխանության ծանուցումների ներկայացում Կապալառուին;
- (6) Մոնիթորինգի տվյալների հավաքագրում և դրանց տրամադրումը ԾԿՄՀ;
- (7) Կապալառուի շաբաթական մոնիթորինգի հաշվետվությունների վերանայում:

#### 4.1 Հատվածներ 1-ի, 2-ի, 3-ի ճանապարհի ՇՄԿՊ-ի հետ համապատասխանության մոնիթորինգ

Հայտնաբերված ամենանշանակալի անհամապատասխանությունները հետևյալն են:

- Բետոնի լվացման ջրերի հետքեր են հայտնաբերվել՝ այդ թվում նաև շինհրապարակից դուրս բնական կանաչապատ տարածքում Հ1-ում ՊԿ 60+ 190;
- Հանված նյութը հեռացվում է առանց պահպանելու անվտանգ հեռավորություն թափոնների հեռացման եզրերից;
- հատուկ բնապահպանական և անվտանգության թեմայով վերապատրաստում չի իրականացվել աշխատողների հետ, անհրաժեշտ է լրացուցիչ վերապատրաստում;
- բեռնատարերը ծածկ չունենին;
- թափոնների մի մասը մնում է մայրուղու երկայնքով: Կապալառուն չի ներկայացնում դրանց հեռացման ժամանակացույցը;
- բնապահպանական համապատասխանության համար պատասխանառուն շինհրապարակում չէր;

- արտակարգ իրավիճակների ընթացակարգերի համար նշանակված պատասխանատուն շինհրապարակում չէր;
- առաջին օգնության պայուսակը և կրակմարիչները առկա էին շինհրապարակում;
- ճանապարհային արգելափակոցները պատշաճ տեղադրված չեն:

#### **4.2 Սարքավորումներով չափումներ և օդի որակի, աղմուկի և վիբրացիայի, ջրի որակի բնապահպանական պարամետրերի մոնիթորինգ.**

Սարքավորումներով չափումներ և օդի որակի բնապահպանական պարամետրերի աղմուկի և վիբրացիայի մոնիթորինգ է իրականացվել Կապալառուի կողմից “ATMS Solutions” ՍՊԸ-ի միջոցով: Այս մասը վերաբերում է Հատված 1 Աշտարակ-Թալին ճանապարհին:

##### **4.2.1 Ելակետային տվյալների հավաքագրում**

Հաշվետու ժամանակահատվածում ելակետային չափումներ են իրականացվել Փոշի 4 (ՊԿ 36+ 600), Փոշի 5 (ՊԿ 38+500), Փոշի 6 (ՊԿ 43+ 300), Փոշի 7 (ՊԿ 44+ 840), Փոշի 8 (ՊԿ 46+680), Աղմուկ 3 (ՊԿ 36+ 400), Աղմուկ 4 (ՊԿ 38+370), Աղմուկ 5 (ՊԿ 43+ 800), Աղմուկ 6 (ՊԿ 44+ 560), Աղմուկ 7 (ՊԿ 46+400) կետերում: Չափման կետերը ընտրվում են՝ հիմք ընդունելով ակնկալվող շինաշխատանքների չափորոշիչները: Ելակետային տվյալների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Աղմուկի և փոշու գնահատման հաշվետվություն թիվ 08-ում, որը հասանելի է “Կորսան Կորվիամ Կոնստրուկսին” Էս.Ա-ի և ԾԿԽ-ի գրասենյակներում: Մնացած կետերի համար տվյալները հավաքվել են 2013թ-ի հուլիսին և նոյեմբերին: Այսպիսով, ելակետային տվյալները հավաքագրվել են մոնիթորինգ պլանում սահմանված բոլոր կետերի համար: Փոշու, աղմուկի և վիբրացիայի համար ելակետային տվյալների հավաքագրման ժամանակացույցը ներկայացված է հավելված Գ-ում:

